



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ ՈՒ Ր Դ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԿՈԴ

050.0181 Ն. 17.10.23

17 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 181-Ն

**ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2023 թվականի երրորդ եռամսյակ)**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,
ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ սահմանելով ռիսկով կշռված ակտիվների 1.5%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
Երևան**

Մ. Գալստյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2023թ. երրորդ եռամսյակ)

2023 թվականի հոկտեմբերի 17-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ 1.5% մակարդակում¹:

Կապիտալի հակացիկլիկ շեմի (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿԲ)) վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է մակրո-ֆինանսական և վարկավորման շուկայի զարգացումների համապարփակ վերլուծությամբ: Մասնավորապես՝

1. Նախորդ եռամսյակի համեմատ Ֆինանսական ցիկլի ինդեքսը գրեթե չի փոփոխվել: 2023թ. երրորդ եռամսյակի համար գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը² փոքր-ինչ աճել է և կազմել շուրջ 65%: Թեև վերջինս շարունակում է պահպանվել իր երկարաժամկետ տրենդից ցածր մակարդակում (մոտ -9.5 տոկոսային կետ), նախորդ եռամսյակի համեմատ վարկեր-ՀՆԱ ճեղքվածքը նվազել է մոտ 0.5 տոկոսային կետով: Միաժամանակ, հարկ է նշել, որ ֆինանսական համակարգի կողմից ապահովվել է տնտեսության բնականոն վարկավորման գործընթացը:
2. Չնայած հիպոտեկային վարկերի տարեկան աճի տեմպի աստիճանական նվազմանը, վերջինս շարունակում է պահպանվել բարձր մակարդակում: Միաժամանակ նկատվում է նոր տրամադրվող հիպոտեկային վարկերի տարեկան հոսքերի կայունացում և անշարժ գույքի գնի տարեկան աճի տեմպերի որոշակի մեղմացում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ անշարժ գույքի և հիպոտեկային շուկայի ցիկլային զարգացումները մեծ հավանականությամբ մոտ են վերին շրջման կետին: Մեր գնահատումների համաձայն, անշարժ գույքի գնի՝ հիմնարարներով պայմանավորված մակարդակից շեղումը նախորդ եռամսյակի համեմատ գրեթե չի փոփոխվել³, և անշարժ գույքի ու հիպոտեկային շուկայում գերտաքացման ռիսկերը պահպանվում են բարձր մակարդակում:

¹ Համաձայն [«Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանափակից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման»](#) կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿԲ)): Կենտրոնական բանկը ԿԲ-ն սահմանելիս առաջնորդվում է [«Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը»](#) փաստաթղթի դրույթներով:

² Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով): 2023թ. երրորդ եռամսյակի գնահատականը նախնական է և կարող է հետագայում փոփոխվել՝ կախված ՀՆԱ փաստացի տվյալների հիման վրա վերահաշվարկի արդյունքներից:

³ Անշարժ գույքի շուկայի գերտաքացումը գնահատվում է շուրջ 28%: Հարկ է նշել, որ այս գնահատականը հիմնված է այն ենթադրության վրա, որ դեռևս նախորդ տարվանից արձանագրված անշարժ գույքի վարձակալական վճարների աննախադեպ բարձր աճի տեմպերը ժամանակավոր բնույթ են կրում և երկարաժամկետ հեռանկարում կարող են չպահպանվել: Առանց այս ենթադրության, անշարժ գույքի գերարժևորման գնահատված ռիսկի չափը ավելի փոքր է և կազմում է մոտ 19%:

3. Ընթացիկ ժամանակահատվածում ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերի ցանկում շարունակում են առաջնային լինել աշխարհաքաղաքական միջավայրով պայմանավորված անորոշությունները և դրանցից ածանցվող ռիսկերը: Միևնույն ժամանակ, չնայած վարկավորման աճի տեմպերի բարձրացման միտումներին, վարկավորման շուկայում զարգացումներն ընդհանուր առմամբ հավասարակշռված են և չեն պարունակում ավելցուկային (ռիսկային) վարկավորման ակնհայտ նախանշաններ:

Վերը նկարագրված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում, Կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում անփոփոխ թողնել ԿՀԲ դրույքաչափը՝ պահպանելով այն 1.5% մակարդակում: ԿՀԲ դրույքաչափի ապագա փոփոխությունները (ինչպես բարձրացման, այնպես էլ իջեցման ուղղությամբ) կաճանցվեն մակրոֆինանսական պայմանների, անորոշությունների և համակարգային ռիսկերի զարգացման հետագա ընթացքից: